



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



23337


ԼԼԵՄԲ  
ԿԿԱՐԾԱԵԼԻ ԱՆԿԻՅ

398.5

Գ-76

1858

2010





542

XI 20

Ս. Է. Պ. Բ.

ՈՒՆԲՆԱԿԻ ԵՆՑԻՑ

ա պարունակին խրատական և խմատալից  
ասացուածք:

117

ԼՈՎԵԱԼ ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ՅԱՅԼ ԵՒ

ԱՅԼ ԼԵԶՈՒՆՑ

Ե. Շիրազի լրտ-Լեռնի


Մակիսի Օ. Տրապիանի

12002

Երբակեցույ:

1858

Ի Տ Փ Խ Ի Ս



398.5

151

1006

2-76

Ա.Լ.Գ.Բ.

Գ

2-76



ՕՐՈՒՆԻՆՆԱԿ ԵՆՅԻՑ

Յորս պարունակին խրատական և խմաստալից  
ասացուածք:

ԻՈՂՈՎԵԱԼ ԵՒ ԹԱԴԻՄԱՆԵԱԼ ՅԱՅԼ ԵՒ ԱՅԼ

1006  
2883

ԼԵԶՈՒԱՅ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Մ. Գ. Զ. Գրասխան

Մտայնացուցի

1858-ՌՅԼ

Ի ՏՓԻՒՍ

Բ-ԵԲԵՄԻ

Ի Տպարանի Արտիստան Հոգևոր Գալուցի Հայոց  
ընծայելի Աղնուսական Աղայ Գեորգայ Արծրունու



31719-42

Handwritten mark

ВЕРИТЕЛЬНОСТЬ

Въ Министерствѣ Народнаго Просвѣщенія  
Секретариатъ

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ**

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ  
Ценсурный Комитетъ узаконенное число экземпля-  
ровъ. Тифлисъ, Мая 9-го дня 1857 года.

Ценсоръ Кайтмазовъ.

1858-В-02

Handwritten mark

ВЕРИТЕЛЬНОСТЬ

14973-58

Въ Министерствѣ Народнаго Просвѣщенія  
Секретариатъ

ЕГО СІЯТЕЛЪСТВУ

Шемахинскому Военному Губернатору, Управляющему Гражданскою Частью, Господину Генераль-Маіору и разныхъ орденовъ кавалеру

КНЯЗЮ КОНСТАНТИНУ ДАВЫДОВИЧУ

**ТАРХАНЪ-МОУРАВОВУ**

*Съ чувствомъ глубочайшаго высокопочитанія и безпредѣльной преданности*

*Посвящаетъ*

*Моисей Зурабовъ.*



# ԱՆՊՐ

## ՔՈՒՆԴԱՅԻ ԼՆՑԻՑ

### 1. ՄԻՏԻ ԵՒ ԲՆՆԵԿՆՈՒԹԻՒՆ

Պօպէ անուամբ Լիզզիացոց մատենագիրն երբեմն խոսակցու թեան մէջ իւր բարեկամաց հետ սասց՝  
 "Եթէ վերին նախախնամութիւնն սրարգեւեւէ մեզ այժմեան մտաց մեծ քանակութիւնն, ապա պէտքէ խնդրել նորանից, որ նա յղէ մարդկութեան կրկնաչափ աւելլել ևս քանականութիւնն, ինչ որում ուրիշ կերպիւ հնարին չէ մեզ մի միայն առաջին սրարգեւել կառավարվել: Մտք և քանականութիւնն՝ կրկնեաց նա միւսանգամ, ստեղծուած են ինչպէս մարդուկնիկ, որ փոխադարձաբար օգնու մեն միմեանց, այլ նաքա ինչպէս և մարդուկնիկ համարեա՛ անդադար կալել են անում միմեանց հետ:"

### 2. ԽՈՒՆԵՄ ՄՏԵՂԻՐՈՒԹԻՒՆ

Մին դեռահաս մանուկ իւր կեանքումն առաջին անգամն գնացելէր լողանալոյ, բայց անխորձ լինելոյն աղաքաւ քիչ էր մնացել՝ որ խեղդվէր. ուստի երբ ուշն գլուխն եկաւ, յայտնեց իւր ազգակցաց այս պատահմունքն՝ ասելով երգմամբ, թէ մահու եմ արժանի՝ եթէ միւսանգամ մինչև լորանսլ սովորիլս ջրի մօտ գնամ:

### 3. ԵՂԱՆԵԿ ՎՐԵՃԻՆԻՐՈՒԹԻՒՆ

Երկար ժամանակ արքունի ծառայութիւն կատարող մին աստիճանաւոր սուանց յանցանաց իւր պաշտօնից զբոխած լինելոյն պատճառաւ, հրապարակաւ յայտնեց,

Թէ այս նորան անմեղ զրկանաց մասին պէտք է վարձ լինին մինչև հինգ հարիւր մարդկանց կեանքն : Տեղական իշխանն լսելով այս երկիւղալի սպառնումնքն՝ պահանջեց նորան և երբ հարձուվորձու թեամբ հարկադրումէր յայտնել թէ՛ ի՞նչ է դիտաւորութիւնն , ասաց թէ՛ ո՞րչա՞ն առանձին միտք չ'ունիմ , ես կամենումէի ասել միայն , թէ մտադիր եմ բժիշկ լինել :

#### 4. 'ՆՈՐԱՉԵՒ ԹՎ ԹԱԿՅՈՒԹԻՒՆ՝

Մին Միգղեացի ազնուական երբեմն նամակ էր գրել իւր ծանօթին այս մտօք , ” Սերելի բարեկամ . . . ես այսօր քեզ մօտ եղեալ ժամանակն մտապեղալ եմ քո գրասեղանի վերայ իմ ոսկեայ ընչադեղոցն (բռնօթաման) . ուստի խնդրեմ դարձուցանել այն ինձ զբարերիս ձեռօքրն : ” Բայց այս նամակս դեռ ևս չ'էր կնքել և ողարկել , նա ընչադեղոցն գտաւ իւր մօտ . ուստի կրկին բացաւ թուղթն ու յաւելցուց վերջումն թէ՛ նեղութիւն մի՛ կրեր որոնելոյ , ընչադեղոցս գտի , իմ տանն էր և ապա նամակն կնքեց ու ողարկեց իմ պատկանելայն :

#### 5. ԽԵՒԻՅ ԿՆՆԱՆՑ՝

Սանդէյլ զիտնականից հարցումն արին , թէ ի՞նչ է պատճառն , որ գեղեցկադէմ կանայքն սովորաբար չ'են այնքան խելօք լինում , ինչքան տղեղքն : Ըսին է պատճառն՝ ասաց զիտնականն , որ վերջինքն ինքեանք անդադար որոնում են գտնել այնպիսի մարդիկ , որոցանից կարելի է խելք ստանալ , իսկ առաջինքն փախչումեն այն կերպ պարոններէց :

#### 6. ՏԱՐԻՒՐ՝

Հենրիգոս դ արքային Բաստիւզիէր անուամբ երեւիլի և զուարճախօս պաշտօնեայն երբեմն հարցուց մին

այլ որ զօրականից, թէ քանի՞ ամաց է նա՝ ճշմարիտն չ'գիտեմ" պատասխանեց զօրականն, բայց կարելի է լինիմ երեսուն և ութից մինչև քառասուն և ութն. ի՞նչպէս է, որ դու քո հասակդ լաւ չ'ես իմանում" կրկնեց ճիւծաղելով Քասովպիէրն. "Ի՞նչ գլխոյս ցաւն էր խննալ", ասաց ճեր զօրականն. "ես համարումեմ իմ եկամուտքըն, խաշինքն (սիւրու) և դրամոցս շահաբերու թիւնն", բայց տարիքս բնաւ հաշուի մէջ չ'եմ ձգում այն պատճառաւ, որ գիտեմ ո՛չ ոք նորանց գողանալ չ'է կարող ինձանից:

7. ԽՈՐԻՆ ՄՏԱԾՄՈՒՆԵՐ:

Կոր ուսումն անած մին պատանի կամելով ցոյց տալ իւր գիտնականութիւնն՝ խօսակցութեան մէջ ասաց իւր ընկերին թէ՛ ես հաւատացած եմ իսկ, որ ո՛չ մին անդ այնքան զանազան պատահումնք չ'են լինում, որչափ բոլոր աշխարհիս մէջ:

8. ԼՊԱՅՈՅՑ ԽԵՂՆՑ:

Դժուրէս քաղաքի վերայ եղեալ պատերազմի մէջ՝ որ 1635 թուին էր, Տէւլաֆէլատ անուամբ զօրականն սաստիկ ձեռով վերաւորվել էր գլխիցն: Արբարոյժն երբ մտիկ տուաւ վերացն, յայտնեց ամիսոսալով, թէ՛ "մեծ վտանգ ունի, լը որում գլխոյ ուղեղն երեւում է": "Շատ ուրախ եմ", ասաց բարձր ձայնիւ զօրականն. "Ի սէրն ԼՊ," Պարոն բժիշկ, փոքր ինչ ուղեղեցս վեր առ ու յլը կարգինալ Մազարինին. նորան չ'գիտեմ, ո՞վ է հաւատացրել՝ որպէս թէ իմ գլխոյս մէջ բնաւ ուղեղ չ'կայ:

9 ՀԱՆԳԻԼՅՍ ԵՒՆՕԹՈՒԹԵԱՆ:

Կամն Լէ ճանապարհորդութեամբ Լիսն քաղա-

քումն եղեալ ժամանակին՝ հետեւելով մարդավարութեան սովորական կարգին, դնացել էր ներկայանալոյ այն տեղւոյ գլխաւոր քաղաքապետին, որ չգիտելով լաւապէս Աբուսի դրան վերայ Կոմսին ունեցած ազգեցութիւնն՝ ընդունեց նորան չարիազանց դառողութեամբ և ապա փոքր ինչ ժամանակ անցանելոյն յետոյ սխտեց հարցանել՝ Կուք փարէզիցն էք, սիրելի՛ բարեկամ՝ ի՞նչ են անում այն տեղ: Այն, ինչ որ ամենայն տեղ է լինում՝ պատասխանեց Կոմսն. Ի հարկ է այդպէս է, բայց այն տեղ ամենից աւելի բարձրն ում ձայնն է,՝ Արաց՝ "ուայից և կառաց: Կո ձեզանից հարցնումեմ՝ կրկնեց մեծամիտ տոնուտէրն, թէ այն տեղ ի՞նչ նորագոյն համբաւ կամ անցք կան: Կանաչ սխեռն՝ ասաց Կոմսն. Օտրմացեալ նորան այսպիսի վտառ պատասխանատուութեանն, վերջումն քաղաքապետն հարցուց նորանից. Ապա ո՞վ ես դու, սիրելի՛ բարեկամ: Տղէտ և անքաղաքավարի մարդիկ Լիսն քաղաքումն ինձ սիրելի բարեկամ են կոչում՝ պատասխանեց Կոմսն, խի փարէզումն ամէնքն ճանաչումեն, որ ես Կոմս Ալէն եմ:

### 10 . ԵՆԸՄՈՒՏԻ ՄՈՒՐԸՅԵԼՆԵՒ

Մին մուրացիկ՝ որ փոքր ինչ մարմնոյն արատութիւն ունէր, պատահելով երբեմն իրան համարուեստ աղքատի, որոյ բոլոր անդամքն չարացածի պէս էին, և կոյր էր երկու աչօք, հարցուց՝ ի՞նչքան դու ամէն մի օր փող ես ժողովում: Մինչև 50 կօպէկ արծաթի, աւելի չէ՞ ասաց նա: Միայն այդքան՝ կրկնեաց հարցանողն. ո՞հ. եթէ ես քո արատութիւնն ունենայի, աներկբայ կարօղ էի տեսնու պատիկ աւելի փող ձեռք բերելոյ. ի՞նչ ասեմ քեզ ամիսս, որ Արտուծոյ պարզեամբ չնորհն վայելելոյ ընդունակութիւն չունիս:

## 11. ԱՆՉԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Համբերդ երեւելի զօրավորն՝ որ աղգաւ Վերմանացի էր, երբեմն անարգում էր իւր ծառային քանի մի անկարգ գործողութեանց մասին. բայց ծառայն կամելով իրան արգարացնել՝ աղաչում էր ներողութիւն տալ նրան, ասելով խօսքի մէջ՝ Թէ ճշմարիտ է՝ պարսն, մեղաւոր եմ. անձանթ մարդիկ այսօր փողոցումն նմանապէս անարդանք էին տալիս ինձ, շատն կարծեւով՝ որպէս Թէ ես Վերմանացի եմ. Արանք մեծ սխալմանց մէջ են՝ պատասխանեց հանդարտօրէն զօրավորն, պէտք է համարենք զի իմար վայրենի:

## 12. ՊԵՏԻՃԱՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մի շատակեր մարդ ունէր յայտնի սովորութիւն կլանել ամէն ուտելիք, ինչ որ կրտսնէր ու ձեռք կ'ըբերէր. Սա երբեմն գնացել էր երեւելի Վիլիլ քանաստիղծին մօտ, բայց մինչև նրան հետ տեսութիւն անելն, վեր առաւ գրասեղանի վերայ դրած խորոված խնձորն ու կուլտուաւ: Հուտով Վիլիլն մտաւ տուն և երբ տեսաւ նախաճաշակի (զակուսկայ) համար պատրաստած խնձորի յափշտակութիւնն, իսկոյն հասկացաւ, որ անկոչ հիւրին գործն է, ուստի տրամալի դիմօք սկսեց հարցանել նրանից, և երբ շատակեր գողն յանձն չի առաւ ուտելն, ապա տանուտէրն յանկարծ փոխելով դէմքն՝ ուրախութեամբ սկսեց ասել " փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ," անմեղ պատուհասից գլուխ աղատեցի, իմ տանըս վաղուց չի յշատ մկուռք են գոյացել, այն մասին այսօր ես անձարութեամբ պատրաստելէլ այն խնձորն մինդեղով (մէրկիմուշ). վայ է նրան, որ կերած ինչ: Այս խօսքն լսելուց յայտնի գողի երեսն գոյնն փոխարկուած, վեր թռաւ աթոռից ու սկսեց յուսահատութեամբ գոռալ, մածուն, մածուն, ՚ի սէրն Աստուծոյ

շուտ բերէք մածուն, վայ, վայ, մահադեղ է եղել կերածս :

### 13. ԱՐԵՒԵՒԵԱՆ ԱՌԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբեմն գիտնական ոմն իւր աշակերտին խրատ տալով ժամանակին՝ խօսակցութիւնն վերջացուց՝ ասելով, ախարն և խելադարն վեց յատկութիւն ունին՝ այսինքն՝ բարկանալ առանց պատճառի, խօսիլ առանց հարկաւորութեան, հաւատալ ամէն բանի, փոփոխիլ անյայտ պատճառանօք, խտանիլ այն ամէն գիպուածոց մէջ, որ ամենեւին նրանց վերաբերութիւն չ'ունին և երբէք չ'ընկել՝ ո՞վ է նրանց բարեկամն և ո՞վ չարակամն :

Ոսկին չ'է պատկանելի ազասին, այլ ազասն ոսկւոյն :

Ս'ի խօսի՛ր բնաւ այն ծառոյ մասին, մինչև չտեսնես նրան բերած պտուղն :

Ուսեալն լաւ գիտէ ի՞նչ է անկիրթն, պատճառ որ նա ինքն երբեմն այն վիճակի մէջ է եղել. բայց անկիրթըն երբէք չ'է կարող հասկանալ ուսումնականութեան գինն, ի՞նչ որում ուսման ճաշակն չ'է առած :

### 14. ՈՒՂՂ ԱՄԻՐՏ ԲՃԻՇԿ

Դուք շատ տեղեակ էք կենդանեաց մարմնոյ ներքին կազմուածոցն՝ ասաց անյայտ անձն Պտի անուամբ բժշկին, և դուք պէտք է, որ իմանաք բոլոր ցաւոց յատկութիւնն և հնարն : Ուղի՛րդ է քո ասածն՝ պատասխանեց բժիշկին, բայց մեք շատ նման եմք փարէզու քաղաքական կառավարութեան գործակալացն, որ լաւ ճանաչում են ամէն փողոցից դրութիւնն, այլ չ'գիտեն, ի՞նչ է պատահում բնակարանաց մէջն :

### 15. ԲՆՐԵՎԱՅՆԻ ՉՈՒԹԻՒՆ՝

Փրկարիկոս մեծ Թագաւորն իւր մին ծառայի վերայ ծանր և անկարգ շարժողութեան պատճառաւ երբեմն այնքան սաստիկ ձեռով բարկացել էր, մինչև ինքն իւր ձեռօք նրան երեսին ապտակ (օխլէ) հարեց. բայց ծառայն տեսնելով՝ որ այս պատահուելից գլխոյ սանաւրած հերաց ձեն փոքր ինչ ցրվել է, շուտով միտքն իւր վերայ ունեւրով՝ մտայաւ Կայսեր սենեկի (օթաղ) հայելոյ դէմ և սկսեց նրա առաջին ուղղել իւր գլխոյ սանաւրածն. Ի՞նչ բանի վերայ ես դու՝ ա՞յ անպիտան, ատայ փրկարիկոս, դա նոր համարձակութիւն է, և նոր պատժոյ էս արժանի: Չերդ Մեծութիւն՝ պատասխանեց ծառայն, այն մտօք եմ անում այսպէս, որ միւս մտտիկ սենեկի մէջ լինող մարդիկն չ'կարողանան հասկանալ ինչ որ անցաւ հիմիկ մեր մէջ:

### 16 ԿԼՐԾԻՐ ԱՆԱՄՈՒՍԻՆ ՄԼՐԳՂՈՅ:

Դուտովիկոս Ժգ Գաղղիոյ Կայսրն երբեմն ամուսնութեան մասին խօսակցութեան մէջ իւր սիրական զօրավարի հետ սկսեց յորդորել նրան, որ կին ամուսնաւոր, ինչպէս հասարակաց բնատուր սովորութիւնն է:

Ի աւ էք հրամայում՝ Չերդ Մեծութիւն, ատայ զօրավարն, բայց ցաւն այն է, որ ես մինչև հիմիկ չեմ պատահել այնպիսի կնոջ, որ արժանաւորութիւն ունենայ ինձ կին լինել, նայնպէս և չեմ գտնում այնպիսի տղամարդ, որ ես կամենայի իմ որդի անուանել:

### 17. ԱՐԺԱՆԱՎՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԱՆՅ:

Մին անդղեացի մատենադիր իւր շարադրութեան մէջ կանանց հարկաւորեալ յասկութեանց վե-

բայ երկոր խօսելով՝ վերջն սահմանում է, թէ աշխարհիս մէջ կան երեք խարհւարդք, որոց ամէն մէկն իւր կարգն հասկացող կնիկ պէտք է նմանացնել այլ իրան, այլ և աշխատի չ'նմանացնել:

**Առաջինն՝** նա պարտաւոր է նմանիլ խիտանջի (ծիրանի ներկ մտող ծովային կենդանի), որ միշտ նստած է իւր բնակարանի մէջ. բայց նա չ'ի պիտի՝ ինչպէս այն կենդանին ամէն ինչ որ զարդ ունի իրան վերայ պահել:

**Երկրորդն՝** նա պիտի որ ինչպէս արձագանդ (պատից, քարից, ծմակից, ձորուց և այլ իրաց ելանող ձայն), պատասխան տայ միայն այն ժամանակն, երբ հարցումն են առում նրանից. բայց և պէտք չ'է, որ նա արձագանդի նման ջանք անէ խօսակցութեան մէջ լինիլ վերջինն, այլ և հարկատ որ է երբեմն, որ և լուս լինիլն սպորի:

**Սերժադէս** նա իւր վարութիւն և կառավարչութեամբն պէտք է որ լինի ուղիղ և կանոնաւոր՝ ինչպէս քաղաքի ժամացոյց (սհաթ). բայց նրան չ'է հարկատ որ այլքան ըարձը ձայն հանել, որ բոլոր քաղաքն կարողանայ լսել:

## 18. ՀԱՏՈՒՅՈՒՄՆ:

**Սին անդղեացի**՝ երբեմն Փարէզ քաղաքի մէջ ման գալոյ ժամանակին յանկարծակի կտորեց մէկ խանութի դրբակի դրան ապակին (շէշէ) և առանց երկար մտածման մտնելով ներս ու աւելով խանութի աէրոջ մին հաս տրծաթի դրամ, որոյ կէտին արժէք կտորած ապակին՝ խընդրեց, որ մնացորդ կէտն իրան յետ տայ: Խանութի աէրն մանր դրամ չունէր. ուստի երբ դուրս գալ էր կամենում գնալ փող փոխ առնելոյ մտաիկ հարեանից, Անդղեացին կանդնեցուց նրան առելով, չարժի նեղութիւն կրելու. ես ինքս կտրող եմ՝ ուղղեցնել մեր հաշիւն. յետ որոյ խիցն հարաւ կտորեց ուրիշ միւս ապակին, և առաց, ահա՛ իմ ու քոյ հասուցումն:

19. ԽՈՐՀՈՒՐԴ:

Երկար մեծայ մին խայտառակ ընտ թեանք երկ-  
 ասորդք հետեւա մէր իւր հարեանի նոր մարդոյ գնացած  
 զեղեցիկ աղքատն բարեհաճութիւնն ձեռք ձգել: — Ողոր-  
 մելն աղջկին հասար չէտու ազատութիւն գանել այն լսքէ  
 ձեռքիցն: Բայց վերջն երբ համբերութիւնն հասած էր,  
 մին օր պատահելով նրան ասաց, եղբայր, դու գլխոյս  
 կ'նշ ցաւ եւ գործել, քանի՞ պիտի ես քս նեղութիւնն  
 կրեմ: Երբ ես երեխայ էի, մորս հրամանին ներքոյ էի,  
 երբ մեծացայ, հնազանդեցայ հօրս, այժմ եւ հնազանդ եմ  
 իմ ամուսնոյս, առաի եթէ քեզ բան ինչ հասնելոյ է  
 ինձանից, իրով ուրիշ հարկաւորութիւն ունիմ՝ կարող եմ  
 յայտնել ամուսնոյս:

20. ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՆՏՆՔՈՒՄԵՆ:

Պօղոս բարաբի մէջ երբեմն դողութիւնն ստաւ  
 կանալոյ պատճառաւ հրաման էր Սուլտանից, որ գիշերէ  
 ասանց լապտերի (փանտա), փաղցն ոչ որ դուրս չ'գայ:  
 Են իսկ օրն՝ երբ հրատարակված էր յիշեալ կարգադրու-  
 թիւնն, մին Յոյն երեկոյին մ'Թաթիւնն հասած ժա-  
 մանակին լապտերն ձեռին դուրս ելաւ փաղցել մէջ: Ո՛ր  
 է լապտերդ՝ հարցայ նրան պահապանն: Ե՛ն ձեռքիս  
 ունիմ: Ինչո՞ւ մէջն մամ չ'կայ: Ե՛րդ մասին՝ ասաց  
 հրամանի մէջ ոչինչ չ'է յիշած: Մ'իւս օրն ջակ հրա-  
 ման հրատարակեցաւ, որ ամէնքն լապտեր ունենան մէջն  
 մամ դրած: Երն իսկ Յոյնն կրկին դուրս ելաւ փա-  
 ղցն: Ո՛ր է լապտերդ հարցին նրան: Ե՛ն ձեռքիս է,  
 պատասխանեց: Իսկ մամն ո՛ր է: Ե՛րոյ ունիմ նմա-  
 նազէս: Ե՛րբ կ'նշու չ'է այն վաւ: Դ՛ուք այս մասին  
 կրկնեց, ոչինչ չ'էլք ասել: Եւ կարգաւ և պարզ տու-  
 էր հրամանն, պատրաստ եմ կատարելոյ: Երբորդ օրն կր-  
 կին նոր հրաման ելաւ, որ փաղց դուրս եկալքն ունենան:

լապտեր մէջն վառած մտնով : Յետ որոյ և խփու-  
թեամբ եղև կատարումն :

### 21. ԹՒՆՆԿՈՒԹՒՒՆՆՆ

Այլևստ հաշակաւոր բժիշկն հրաւիրված էր օգ-  
նու թիւն հասցնելոյ մին աղքատ մարդոյ կնոջ ծննդեան  
ժամանակին . խփ երբ պարտաւորու թիւնն կատարեց լաւա-  
պէս և դուրս էր գնում , տանուաէրն՝ որ շալակաւ բե-  
ռըն կրող էր , առաջն կարած՝ կանդնեցաւ հարցուց , սը-  
քան է բժշկի նեղու թեան վարձն : Այլևստ պատասխա-  
նեց՝ քսան դահեկան : Ի՞նչ քսան դահեկան կը պահան-  
ջես՝ զարմացած դուստր խեղճն : Պիտես՝ օրհնեալ  
բժիշկի , ես չափահաս մարդոյն շալակաւս տանու մեմ մին  
վարսաղ ( աղաջ ) հեռուսրու թեամբ տեղ , և ստանու մեմ  
միայն կէս դահեկան , քայց դու ի՞նչ խղճմտանօք քսան  
ես պահանջում՝ քեզ վարձ այն մասին , որ քանի մի քու-  
պէ պահեւես ձեռացդ վերայ համարեալ բռնաչափ փոք-  
րիկ երեխայն :

### 22. ՀՆԱՍՏՆՏՈՒՆ ՊՄՏՃՆՈՒ

Ի ուղտիկս ժի՛ Կայսրն երբեմն հարցումն արաւ  
Սանլիսիոյ՝ եպիսկոպոսից , քանի՞ ամաց պէտք է լինի նրա  
կարծեօք Կումն Պարսկսննն , որ այն տեղ ինքն ևս ներ-  
կայ էր : Պատասխանեց հոգեւոր հայրն , Չէրդ Սեծու-  
թիւն՝ ես այժմ ութսուն և երեք ամաց եմ : Կումն ևս  
հաստիակից է ինձ , և աւելի հաստիաւ պէտք է չ'ի լինի ,  
ք որում մեք 'ի միասին եմք ուսումն առել : Հայր  
սուրբն սխալուած է՝ ասաց Կումնն , պատճառ որ ո՛չ նա  
և ո՛չ ևս երբէք ուսումն չ'եմք առել :

### 23. ԿՐԿՆԵՆԻ ԴԷՏԱՊԵՐՏՈՒԹԻՒՆ

Մին պատժապարտ Տաճիկ՝ որ պէտք էր խեղճ վեր կախազանի վերայ՝ պատժոյ տեղն տանելոյ ժամանակին՝ ինքն իրան ան ու վայ կանչելով՝ ասումէր, եթէ ես մեղք ինչ գործած լինիմ, այն ամեններն ընդդէմ կամացս է պատահել։ Եւ դպէս և այսօր ընդդէմ կամացդ պիտի խեղդեն քեզ, անիրաւի զաւակ՝ պատասխանեց մին անյայտ անձն։

### 24. ԱՄԷԺԻՒՆԴԻՐ ԶԻՈՅ

Մին շինականի՝ իւր գիւղապետի ձին այնպէս սատոխ ձեռով արացից (քացի ապ) որ կէս ժամու չափ գեանի վերայ ուշադուրկ ընկած մնումէր, յետոյ խելքն գլուխն դարձած՝ ասաց լաւ է որ այսպէս արծայ դարձելույն ձեռքից նա՝ գիտեմ աւելի վատ պատահմունք կուղէր բերել գլխոյս անիրաւին իմ վերայ անբաւական լեւնելոյն գլխուոր պատճառն այն է, որ ես գիւղապետին խորհուրդ էի տուել վաճառել գարշելոյն ուրիշ մարդոյ։

### 25. ՃՇՄԵՐՏԱՍԷՐ ԴՌՆԵՊԵՆ ԾԵՌԱՆՅ

Քանի մի երեւելի վաճառականք հանդիպելով հարկաւորութեան տեսութիւն ունենալ տէրութեան գլխաւոր իշխանին հետ, եկան նրա դռան և հարցուցին ծառային՝ կարելի՞ է մանել Պարոնիդ մօտն։ Պարոն տանն չ'է՝ ասաց նա, դնացել է իւր ծառայութեան գործոյն։ Եւրբ կարելի է վերադառնայ, հարցուցին կրկին։ Պատասխանեց, երբ Պարոն հրամայում է ինձ ասել իւր մօտ եկողաց՝ թէ տանն չ'է, նա չ'է յանձնում յայտնել իրան դառնալոյ ժամանակն։

## 26. ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ :

Մին Իրրանտիացիոյ պատմում էին երբևէն թէ  
 Լոնդրիոյ ընտիկէքն ըստ մեծի մասին երկար կեանք են  
 վարում և թէ այն սեղ շատ ժամանակ չ'է որ մին ձեր  
 մարդ վախճանվել է հարիւր տարեկան հասակաւ : Ի՞նչ  
 զարմանք կամ մեծ բան է՝ ասաց նա թէ և իմ պապն  
 մինչև այսօր կենդանի մնայր ՚ի հարկէ նա ևս կը լինէր  
 հարիւր և երեսուն տարեկան :

## 27. ՈՐԿՈՐԱԺԷՏ :

Հայկերս թի ժամանակին քանի մի անձինք ժողոված՝  
 զանազան ստարիայից վերայ երկար միճաբանու  
 թինն էին բացել , բայց երբ որ կամոց կամոց տարացած սեր  
 սեցին աւել բարձր ձայնիւ խօսիլ , նրանց մին ընկերն՝ որ  
 մեծ ջերմեւանդու թեամբ ծառայողն էր իւր ստամբոսին  
 կտտարելապէս կշտանալուց յետոյ՝ գլուխն բարձրացրաց  
 ու ասաց , — Ըստուած կտրէք՝ պարսնայք , բաւ ակնն է ,  
 հանդարտ խօսեցէք , տեսնում էք , որ ձեր դստալոյ ձայնիցն  
 մարդ ընաւին չ'է կարողանում հասկանալ , թէ ի՞նչ է  
 կերածն :

## 28. ՓՍԽԵՑՈՒՑԻՉ ԴԵՂ :

Մին բժիշկ իւր հիւանդի ցաւազարտ թեան  
 ընդդէմ վստեցուցլէ դեղ էր գրել , այլ հիւանդն յան  
 կարճ դուալով ասաց՝ պարսն բժիշկ , հեռացուր ինձա  
 նից ՚ի սէրն Ըստուծոյ այդ դեղք , ես երկու անգամ խմել  
 եմ ու փորձել , որ այն քանի մի բուսկից աւելի երբէք չ'է  
 մնում ստամբոսիս մէջ : Երանից ոչինչ օգուտ չ'է լինիլ ,  
 միայն վարն է զնւր կորչում :

29. ԽԵՆԼԵՅԻ ԳԵՂՆԱՍԻԿ

Նորընտիր զօրականաց ժողովման ժամանակին  
 Գաղղեայ մին գեղեց երկու շինական պատանի բերել էին  
 քաղաք, ուր պէտք էր վիճակ ձգելով՝ յայտնի լինելը թէ  
 նրանցից ո՞րն է ընդունելի ծառայութեան : Սխիակար-  
 կու իշխանն վաղ քան բնորու թիւնն շինականաց միոյն  
 ազգականից կաշառ առնելոյն պատճառաւ և կամենալով  
 պրծայնել նրան, հնարել էր խորամանկութեամբ, որ վի-  
 ճակի գնդակքն երկուքն ևս սե ձգվին սնդկի մէջ : Ան-  
 սորա իշխանն հրամայեց յառաջագոյն միւս պատանոյն,  
 որ աղքատ էր ու չ'սէնէր կորսողութիւն գրամ տալոյ՝ հա-  
 նել սնդկի մէջնց մի հասիկ գնաակ, հրամայելով՝ որ եթէ  
 հանածն սե լինի, նա պէտք է մանի ծառայութեան մէջ :  
 Եւն ուրբմէ լին խիոյն հասկանալով անիրաւ իշխանի գի-  
 տաւորութիւնն, ձեռք ձգեց և գնդակն սնդկից հանելոյ  
 բազէին, առանց ձեռն բանալոյ ու ցոյց տալոյ ձգեց բերանն  
 ու կուտուտ : Իշխանն զարմնալով այս գործողութեան  
 վերայ, ի՞նչ արարեր զու՝ ասաց, այ՛ աղայ : Ո՛չնչ, պա-  
 տասխանեց գեղզականն, այժմ՝ հերթն իմ ընկերին է, թնդ-  
 նա հանէ մնացած գնդակն, եթէ իմ կուլ տաւածն սեն է,  
 ապա մնացածն պէտք է լինի սպիտակն, ասաի և ևս պար-  
 տաւոր եմ ծառայութիւն ընդունել, իսկ եթէ սնդկի մէջ  
 սեն է մնացել, ուրեմն կուլ տաւածս սպիտակն է, և ևս  
 իրաւունք սենիմ՝ դառնալ գէպ'ի տուն : Եւս հանդաման-  
 քըս ստիպող եղև իշխանին իւր անիրաւութիւնն ծածկելոյ  
 մասին ազատութիւն տալ երկու պատանեկացն՝ ի միասին :

30. ՏԱՐԵՂԻՆԳ ՓՈՒՆՈՒՄ

Աղքատ շինականի վաղոյ պակասութիւն էր պա-  
 տահել, ասաի առաւօտեան լոյսն ծաղկելոյ ժամանակին  
 գնաց իւր հարեանի դուռն բաղկեւելով՝ հարցրուց, քնա՞ծ  
 ևս սիրելի : Հանդամանքն լաւ դիտէ՝ պատասխանեց հա-

րեանն, կցելով թէ ինչ հարկաւորութիւն ունիս : Խընդ-  
րեմ, ասաց աղքատիկն՝ փոխ տուր ինձ ասան դահեկան :  
Ո՛հ, ներկր, քնած եմ, ասաց հարեանն :

### 31. ՅԱՐՄԱՐ ՊԱՏԱՍԻՆԻ :

Փէշիէ անուամբ երևելի ատենախօս եպիսկոպոսն  
չքաւոր մտադործի որդի էր : Աբբունի դրան մեծ յար-  
գանք ունեցող մին իշխան՝ որ իւր մեծազգի տոհմից լի-  
նիւցն աղաղաւ շատ պարծենկոտ էր, երբեմն խօսակցու-  
թեան մէջ ասաց եպիսկոպոսին, թէ զարմանալի է, որ  
մարդիկ վաճառ ահանի խանութից հասնու մեն եպիսկոպո-  
սութեան աստիճանին : Փէշիէն՝ որ թէ և չտիպանց  
պարկեշտ և հանդարտաբարոյ էր, բայց այս անդամն համ-  
բերութիւնն հատած՝ կամաց ու անշիթով պատասխանեց  
անքաղաքավար ընկերին, ասելով՝ եթէ դուք այն տոհմից  
լինէիք, որից ես եմ ծնված, ապա նայելով ձեր հա-  
կացողութեանն՝ կարծեմ՝ դուք մինչև այսօր անպատճառ  
մտնվաճառի գործատան յեփն սպասաւորն կլինէիք :

### 32. ՍՐԵՄՏՈՒԹԻՒՆ :

Մին գիւղական՝ որ բնաւին քաղաք չ'էր տե-  
սած, առաջին անգամն գնացել էր Փարէզ, ուր հետա-  
քրքրութեամբ ման դալով՝ շուկայի (բազարի) մէջ, վերջն  
հասաւ մին լուսնախոյտի (սարրաֆի) խանութի մօտ, բայց  
տեսնելով՝ որ նրա մէջ ոչինչ ապրանք չկայ, զարմացաւ •  
և ազա պարզամտութեամբ հարցոց խանութատէրից, թէ  
պարսն, գիտե՞լ կուզեմ, ի՞նչ վաճառելի ապրանք ունիք :  
Լուսնախոյտն կամելով ծիծաղել լողճուկ գիւղականի վե-  
րայ՝ պատասխանեց, թէ իմ վաճառելիքն իշոյ գլուխք են :  
Կարծեմ շատ գնողք կան պարսն՝ ասաց շինականն, պա-  
ճառ որ խանութիդ մէջն, ինչպէս երևումէ, այժմ՝ միայն  
մի հասն է մնացել :

33. ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Կրան Գրամմոնն երբեմն կամեւով ծաղը անել մին  
 գիշաքնակ աղնուականի վերայ, որ նոր էր եկել ծառայ-  
 ելոյ Աքբունի դրան՝ մտացաւ նրան մօտ և բաւական  
 լսելի ձայնիւ հարցումն արաւ, թէ ի՞նչ նշանակութիւն  
 ունին զուգորդ, (գիծ) անարժանի և խերեհշ (չորրորդ մա-  
 սքն կօպէկի) բառքն: Այնիւ շինականն անյապաղ պատաս-  
 խանեց հանդարտօրէն, թէ զուգորդ ասածդ այնպիսի բառ  
 է՝ որոյ նշանակութիւնն չէք հասկանում և ինքեանքդ,  
 անարժանն այն է, որ դուք այժմ՝ ասացիք ինձ խի խերե-  
 լեհն ձեր յատուկ արժեքն է: Յոյս ունիմ պարնն Կրան,  
 որ դուք այսուհետև յիշեալ բառից նշանակութիւնն չի  
 մոռանար:

34. ԾԱԳՈՒՍՆ ՏՈՒՄԻ

Փշանցիսիս ան հարցուց Կատելանուսից, որ այն ժա-  
 մանակի սրախօս մարդ էր. թէ զու աղնուատն՝ ինչ էս:  
 Պատասխանեց նա, "Չէր Մեծութեան կարծեմ յայտ-  
 նի է, որ աղնուական անձինց միայն երեք էին Արշա-  
 տապանի մէջ, բայց նրանցից որո՞ւ ասհմիցն է իմ ճննդեան  
 ծագումն. բնութիւն չ'գիտեմ":

35. ԿԼՐԵԿՅՈՒԹԻՒՆ

Ան լատուտ որ կին տխրութեան մէջ լինելով իւր դստեր  
 սաստիկ հիւանդութեան մասին, որոյ առողջութիւնն յուսա-  
 հատելի էր, արտասուելով սիսեց տղաշակել առ Արտուտ-  
 ասելով՝ ո՞րորմած տէր, թող ինձ համար այս իմ հի-  
 ւանդ աղջկին և տանք, քեզ լինին, միւս բոլոր զուակուներս:  
 Այս դիտուածումն երիտասարդ մարդ մի, որոյ կինն հի-  
 ւանդ աղջկան քոյրն էր, մտացաւ դէպ 'ի իւր զոքանչն  
 ու քաշելով կամոց նրան թեկն՝ հարցուց, մայրիկ,  
 փեսայիդ նմանապէս քո զուակաց շարունն ես համարում:

85582  
 28532  
 14978-58

### 36. ՊԼՏԻՆԻ ՍԼՏՆԵԼՅԻ

Ի ճիգրայի գլխաւոր փողոցի մէջ երբեմն մին գեղեցկագէտ  
և հարուստ հագուստով կին ման էր գալիս յետ ու յա-  
ռաջ: Սա յետ փոքր ինչ ժամանակի պատահեց մին գար-  
շելի դիմօք երիտասարդի, որոյ հետ երբեք ծանօթութիւն  
չունէր և թօսակցութեան մէջ խնդրեց անծանօթից աղա-  
չելով, որ նա նեղութիւն կրէ գնայ նրա հետ 'ի մի-  
ասին: Երիտասարդն առանց ընդդիմանալոյ համաձայնիւ-  
ցաւ կատարել նրա խնդիրն, ուստի և ճանապարհ ան-  
կան ու գնացին, բայց գնալոյ ժամանակին միամիտ մարդն  
անհանգիստ մտածմանց մէջ էր չ'իմանալով կնոջ միտքն  
ու հարկաւորութիւնն: Ա' երջապէս մտին նրանք մին հոյա-  
կապ խանութի մէջ, ուր բաց 'ի զանազան արծաթեղի-  
նաց սչինչ այլ վաճառելի ապրանք չ'կային: Ա'ինն յետ  
քանի մի ըոպէից խանութատէրոջ գործակատարին ասաց,  
ահա՛ իսկ և իսկ այսպիսին է ինձ հարկաւոր՝ ցոյց տա-  
լով մատամբ հետն եկած ընկերին վերայ, և ապա շու-  
տով գուրս գնաց ու հեռացաւ: Միամիտ երիտասարդն  
մնաց սառած իւր տեղն մեծ երկբայութեան մէջ. վերջն  
հարցուց գործակատարից. ասա՛ խնդրեմ, ի՞նչ է գնել  
ձեզանից այն կիկնն: Ոչինչ՝ ասաց գործակատարն, միայն  
նա սրանից քանի մի օր յառաջ յանձնել էր մեզ շննել  
արծաթեղէն պատկեր, որ նման լինի սատանայի. բայց  
որովհետեւ առանց այն կերպիւ երես տեսնելոյ հնարին չ'էր  
կատարել նրա յանձնարարութիւնն, ուստի և այսօր բե-  
րել է մեզ մօտ ցոյց տալոյ քո դէմքն:

### 37. ՉԻՐԻ ԲՆՈՒԹԵԼՆ:

Մին նորահաս ու շատ սիրուն կին պատրաստելով զը-  
նալ իւր բարեկամի հարսանիքն, մարդ յիւց հարեանի  
այբի հարսին մօտ, որ նրանից հոսակաւ մեծ և դիմօք

տգեզ էր՝ խնդրելով տալ մին աւուր ժամանակաւ դոհա-  
 րեղէն և մարգարտեղէն զարդարանքն: Ըստ նրան՝ պատաս-  
 խանեց հարեանի հարսն, թէ նա կ'յլ է ինձ իւր գեղեցիկ  
 դէմքն, ես ևս ուրախութեամբ կտամ նրան իմ բոլոր  
 թանկագին զարդս: Իսկ մինչև այն թող մնայ ամբերտ  
 մօտ ու՛մ ինչ բնութիւնն տուրք ու հնար է բաշխել հա-  
 ւանել ի երեւելոյ այլոց:

**38. ՊԵՏՐԱՆ ՀԱՄԵՄԵՏՈՒԹԻՒՆ:**

Մարկիզ Ղե—բիէվըն փարէզու մէջ հռչակաւոր էր  
 երկգիմն և իմաստալից բանիւք խօսելոյն պատճառաւ: Սա  
 երբեմն հասարակութեան մէջ, երբ յետ երկար խօսելոյն  
 ծրծաղաշարժ առարկայից վերայ՝ փոքր ինչ լուռ էր մնա-  
 ցել, յանկարծ մին անյայտ պատանի հարցումն արաւ, թէ  
 ի՞նչ զանազանութիւն կայ գնտասեղի (սանջաղ) ու Մար-  
 կիղի մէջ: Ըստ հարցմանս ոչ ոք չկարողացաւ պատասխանի  
 տալոյ: ուստի նայն պատանին ասաց՝ գնտասեղն ունի ուր  
 ծայր և փոքրիկ գլուխ, բայց Մարկիզ—Ղե—բիէվըն, ճշմա-  
 ըրտ է, սրութիւնն շատ է, այլ ավանս, որ գլուխ չունի:

**39. ՅԵՐՈՂԻՄԻԱՆԻ ԿՈՒՅՆԻՆԻ Ի ԵՐԵՎԱՆ:**

Իւր գովիկոս Ժգ Վաղղիոյ թագաւորի ժամանակին  
 նրա զօրաց մէջ դաշնակցութեան կանոնաց համեմատաւ շատ  
 զինուորակա՞նք կային Ըռեցարիոյի տէրութիւնից. այլ  
 նոքա երկար միջոց Վաղղիոյ գանձարանից բռնիկ շատ  
 նալոյն պատճառաւ Պետրոս Սրուպա Ըռեցարիոյի  
 յայտնի զօրագետն գնացել էր Փարիզ քաղաքն միջնորդ  
 լինելոյ: Երբ սա ներկայացաւ կայսերն ու սկսաւ միջ-  
 նորդութեան հնարքն՝ ի գործ գնելոյ, Վաղղիոյ Իւվուայ  
 անուամբ զինուորական նախարարն՝ անբաւական լինելով  
 այսպիսի յորդորական միջոցայ վերայ՝ ասաց կայսերն՝  
 Չէրդ Մեծութիւն, այդ խնդրանաց նման շատ մեծ գան-

գատ են տուել և միւս այլ զօրաց մատուցին. բայց բաւականութիւն հատուցանելոյ հնար գտնելն դժուարին է. և թէ Չեր գանձարանից Շուէցարիացեաց հատուցած գրամաց գումարն այժմ՝ ձեռաց լինէր՝ աներկբայ կարելի էր արծաթեայ ճանապարհ բանալ Փարէզից մինչև Քաղէլ քաղաքն. Շառ կարելի է՝ պատասխանեց հանդարտօրէն Աղուպպա զօրապետն, բայց եթէ Շուէցարիացեաց զօրականաց Քաղզիոյ ծառայութեան մէջ բարձր թափած արիւնն նմանապէս ճեպր, ասպա կարծեմ՝ նրանով կարելի լինէր գետ շինել Քաղէլից մինչև Փարէզ. Արամիտ զօրապետի պատասխանն պատճառ եղև զօրծոյն շուտ և բարուք վերջաւորութեանն:

#### 40. ՅԵՐՄԵՐ ԴԻՊՈՒՆԾ:

Հոգաբարձութեան զօրծն շատ անգամ քանի վիճմանց և փորձանաց պատճառ է լինում, յայտնի է. Յես վախճանելոյն մին երեւելի հարուստ վաճառականի կարգվել էր նրա անչափահաս որդւոյն վերայ հոգաբարձու հանդուցելոյ հարազատ եղբայրն, որ շատ ատելի էր թուում այն աղային. ուստի և անդադար վիճմունք էին դոյանում նրանց մէջ. Պատահեցաւ երբեմն, որ այն դեռահաս արդւոյն տեսաւ անծանօթ պատկերավաճառի մօտ իւր և հոգաբարձուի կենդանագիր պատկերքն. այլ որովհետև հօր եղբօր պատկերն իրանից բարձր էր կտիւ արած. ուստի նա չ'կարողանալով պահել համբերութիւնն, ասաց, պարնն, շատ լաւ կարգաւ ես կ'ախ արել, մի՞ թէ քեզ յայտնի է մեր գերդաստանի անցքն, որ այդ պատկերաց բարձր ու ցած գրութեամբն ցանկացել ես պարզապէս ցոյց տալ այլոց, թէ հոգաբարձուս նստած է իմ վրդի վերայ. Այս խօսքիս վերայ շատ զարմացաւ պատկերավաճառն, թէ որում անծանօթ էր ամենեւին աղային և նրա հանդուստանացն:

### 41. ԿՆԾՈՒԹԻՒՆ

Յայտնի Գ. . . . Բ. . . . ազահն ունէր սովորութիւն, երբ դերձակն նրա հազուաօրի չափն կրթաւոր, շունչն փորցն մէջ կրպահէր ու հանել չէր կտմենայ, կարծելով՝ որպէս թէ այս հնարիւք հազուաօրին համար 'ի գործ դնելն իրքն քիչ կըհարկաւորվն. Բայց 'ի զուրհը մուս գերձակն այլ և յայտնի բաժնին արգելք դնելն զբժուար է :

### 42. ՄՆԾՆՈՒԹԻՒՆ

Մին երեկելն Մնդղիացի տեսնելով կայսեր հանդիսուոր հացկերութի ժամանակին մին չափազանց հաստանդամ կին, որ ամենեկն անծանօթ էր նրան, հարցուց իւր մօտ նստած նոյնպէս անյայտ ատիճանաւորից, ասելով՝ գիտե՞՞ս, եղբայր՝ ո՞վ է այդ կոթն, Մտիճանաւորն պատասխանեց, Պարսն՝ այդ կոթն Շուէտի գետպանի (էլէն) կինն է և մայր որթուն (հարթ, մողի), որ այժմ՝ իստակցութիւն ունի ձեզ հետ :

### 43. ՀՄՈՒՏ ԹՈՒՆԸՆ

Երկու գեղաբնակ պատանիք մին օր գնում էին իրանց երկրի գլխաւոր քաղաքն՝ կամելով այն տեղ, ինչպէս սովորաբար ամառն է, գլուխ ու ոտքն կոկիւղ : Սեղացած երկար ժամանակ ոտքով ճամբորդութիւնից, վերջն պատահեցան անյայտ ուրիշ ճանապարհորդի, ուստի և հարցու փորձ արին նրան, թէ մինչե իրանց գնալն քաղաքն ո՞ր բան է մնացել : Տան փարսախ՝ տասց անծանօթ մարդն, Հապա քիչ է մնացել, ասաց ընկերին շինական ճամբորդաց փաբրիկն. ուրեմն հեռաւորութեան հաշուին նայելով՝ պէտք է ամէն մինն մեղանից հինգ հինգ փարսախ գնայ : Ե՛հա գովելն հմտութիւն. 'ի հարկէ երկու անդամ՝ հնդկ գումարն ստան է :

### 44. ԲԱՆՄԱՅ ԲԵՂԱԲԱՍԲՈՒԹԻՆ

Վաղղիացւոց Տիւրէն յայտնի զօրապետն պատե-  
րազմի ժամանակին երբ տեսաւ, որ յառաջապահ զինուո-  
րական մեծ մասն թշնամեացկողմից թափւիլոյ դնդակաց (կիւ-  
լէի) ահիցն աչք ունքն ճիւղաբուժ էին և երբեմն նստում ու  
շուտով վեր էին թռչում, կանգնում՝ նշինչ, սրբիք նշինչ,  
ասաց Տիւրէնն՝ այդպիսի հիւրոց (զօնալ) հետ պէտք է միշտ  
քաղաքավարութեամբ շարժվել:

### 48. ՉԵԻ

Ընական քահանայի մօտ բերին մին երեք տա-  
րեկան երեխայ, որ յետ ծնվելոյն սխալմամբ չ'էր գրված  
չափաբերական ցուցակի մէջ: Պիտնական քահանայն (գու-  
ցի գժբողգարար Հայոց ազգից էր), հետեւելով հաւա-  
տարմագէս սովորական ձեռոյն՝ գրեց ցուցակի մէջ այսպէս՝  
այս ինչ տարւոյ, ամսոյ օրին և այլն, այս ինչ գեղական  
նի... և նրա ամուսնոյն... ծնվել է երեք տարեկան  
արու զաւակ Պետրոս անուամբ:

### 40. ԼԱԼԱՆՆ

Մին մաշկափար Լնգղիացի, որ և մեռելոց վերայ  
լայականչէ պորթաւորութիւն էր կատարում. մին օր գա-  
լով իւր համարուեստ ծանօթի մօտ, ասաց նրան, Տօմ եղ-  
բայր, դաս ինչ է այսօր ինձ բարեկամական սէր ցոյց տաս:  
Ինչ հարկաւորութիւն ունիս, հարցուց նա: Պատասխանեց,  
թէ խնդրեմ այսօր գնաս իմ փոխանակ լաց կանչելոյ Քոր-  
վէլ վաճառահանի թաղման հանդէսին: Ինչո՞ւ, հարցուց  
Տօմ՝ ինքդ չ'ես կամենում գնալ: Լնն պատճառաւ,  
պատասխանեց կրկին՝ որ այսօր ես չեմ կարող արտասուել,  
որովհետեւ այս առաւօտեան պահաւն իմ կինս վախճանվել է:  
Երեւի շատ ջերմեանդ սէր ու համաձայնութիւն է ունե-  
ցել կնոջ հետ:

### 47. ԱՐԻՒՐ ԿՏԵԿ

Շանք հիւանդութեան մէջ լինելով մին հա-  
 րուստ իշխան՝ կտակագիր շինեց նշանակելով իւր բոլոր սպա-  
 սաւորացն կարելին չափով վարձուց բաժին բաց ՚ի կառա-  
 վարչէն կայից ու կալուածոցն (մալ, միւլք) այլ չուզելով՝ որ  
 կարծեն, թէ նրա անունն մտացութեամբ չ'է յիշած՝ կտակ-  
 արարն յաւելցուց վերջին՝ այս ինչ կառավարչիս ես կտա-  
 կիս մէջ սչինչ չ'եմ նշանակում, պապճառն որ նա քսան  
 տարի ծառայել է ինձ: Ի՞նչ թագուն բան է, որ խելօք  
 կառավարիչն յառաջագոյն իւր պաշար ք բաւականին յետ  
 դրած կլինէր:

### 48. ՏԷՐ ԵՒ ԵՒՆՈՒՆՅՆ ՆՈՐԱ

Պէտք է ճշմարիտն խօսած՝ ասաց երբեմն մին պա-  
 րոն իւր ծառային, որ մեք շատ անբաղդ եմք, հնար չ'ու-  
 նելով կառավարելոյ առանց սպասաւորի: Իմ կարծեօք՝  
 պարոն, պատասխանեց ծառայն, աւելն անբաղդութեան  
 մէջ մեք սպասաւորքս եմք, որ պարոնայք իշխանութիւն  
 ունին մեր վերայ և մեք նմանապէս առանց նրանց կառա-  
 վարիլէ չեմք կարող:

### 49. ՅՈՒՇԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մին զօրապետ, որ երկու անգամ Գերմանիայի  
 և Իտալիայի հետ պատերազմաց մէջ յաղթված ու ջարդ-  
 ված էր և զօրաց մեծ մասն կոտորածի էր տուել, մին օր  
 առաւօտուց իւր դրնից սեսաւ կախ տուած պատկեր, յո-  
 րոյ վերայ ձեացուցած էր մեծ թմբուկ (տէֆ) և ներքէն  
 գրած, ինձ ճեծումեն երկու կողմից:

30. ՕՐԱՅՈՅՑ:

Գլխահալան իշխանի կինն երբեմն մեծ անբաւականութեամբ դանգաւախում էր, որ իւր մարդն անբաւարար գիշեր ու ցերեկ գրութեան երնթերցման զբաղմանց մէջ լինելով, երբեք միայն չէ բերում նրան: Երանի թէ ես գիրք լինէի, դու գացէ այն ժամանակն՝ ասում էր կինն մարդոյն, երբեմնուզէս ինձ ես միտք կը բերէիր: Ասա լսելը ես խօսում, հողին, պատասխանեց մարդն — ես նմա նապէս կը ջանկանայի, որ դու գիրք լինէիր . . . զարօրինակ ինչպէս սարեկան օրացոյց:

31. ԱՆՄ:

Մին կին իւր մարդոյն սպանել էր անհատարմաութեան պատճառաւ: Նրան բանտարկելու թեան մէջ էին ձգել և յետ քանի մի ամբողջ ներկայացուցին Փիլիպպոս դժբաղաւորին, որոյ հարցումիորձութեամբն յանցաւորն պատմեց իսկութեամբ իւր բոլոր հանգամանքն: Այստեղ գութն շարժվեցաւ. ուստի արձակելով նրան՝ ասաց, դնա՛ Տէր Ընդբեզ, բո հողին այնքան լեքն է սիրով մարդոյդ վերայ, որ ճշմարիտ նրան մէջ բաւականութեան հար չէ դեռ անշաւորելոյ:

32. ՆԵՐՈՂ ՈՒԹԻՒՆ:

Գրամմոն կոմսն երբեմն Միգրիտացոյ կարողութեամբ կայսեր մօտ շուշ ուտելոյ ժամանակին՝ տեսաւ որ առ մէն ուտելիքն շատ վատ էին պատրաստված: Երբ դուրսաւոր սպասաւորն՝ ինչպէս արքունի դրանց մէջ յառաջ սովորութիւն էր, ծնկան վերայ լծաւ կայսերն իւր մէլու ջուր տալոյ, կոմսն նոյն իսկ վայրկեանին ասաց. կայսրն ողջ լինի, դա Չեր Մեծութիւնից ներողութիւն է խնդրում կերակրոց վատ պատրաստվելոյ մասին:

### 53. ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՌԻՒՆՆԵՒ

Մի կին՝ որ աւելի պառաւ չէր, և ունէր չափաւ որ  
 գեղեցիկութիւն, հայելոյն մտիկ տալով՝ հարցրուց իւր  
 խորթ աղջկանը, թէ ի՞նչ կըտայիր իմ կերպարանքս ու-  
 նելոյն համար: Մի և նոյնն՝ ինչ որ դու պատրաստ ես  
 տալոյ, եթէ հնարին լինէր քեզ ունիլ իմ հասակս, պա-  
 տասխանեց աղջիկն:

### 54. ՊԱՏԱՌԻՒՆՆԵՒ ԸՍՏ ՀԱՐՑՄԱՆ

Մին շինական փարիզու մէջ գատատանտկան  
 գործ ունելով՝ գնաց օգնութիւն խնդրելոյ արքունի Մտե-  
 նադպրոց, որոյ մօտ գնալ ու դալ ունէր նրա նահան-  
 գապետ եղեալ ժամանակին: Մտենադպրոն մեծ բարեհա-  
 ճութեամբ ընդունեց նրան, և տպա խօսակցութեան մէջ  
 հարցրուց, թէ ձեր նահանգումն կան և հիմիկ շատ խե-  
 լացնորք, ինչպէս յառաջ էին: Բաւական կան և ներ-  
 կայ ժամանակիս, պատասխանեց շինականն. բայց այնքան  
 աւելի չ'են, ինչքան երբ դուք մեր նահանգումն էիք լինում:

### 55. ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Ստանդաւոր հիւանդութեան մէջ լինելով մին յայտ-  
 նի արբեցող մարդ՝ որ բնութին ջուր չ'էր տիրել, երբ  
 տեսաւ, որ մահն մօտացել է, շուտով պահանջեց իւր  
 ատելի խմիչքին մին մեծ աման և խոլոյն գլուխը քաշած  
 խմեց ու դարտակեց, ասելով՝ մահս հասած ժամանակն է,  
 պէտք է հաշտվիմ թշնամոյս հետ:

### 56. ՓՈՒՆԴՒՆԻՔՈՒԹԻՒՆ

Մտորելիս ժգ Կայսերն երբեմն մին աստիճա-

նա որ ասաց, թէ Ալիլարիոս այն ժամանակի պատերազմող զօրաց զլեւուոր կառավարիչն բանակատեղումն (օրատ) իւր գործն (ք շահաւետութիւնն) լաւ շինու մէ: Եւ ապա կարելի է պատասխանեց Ի ողորմիոս, բայց նա այն աեղ աւելի լաւ է կատարում և իմ գործն:

### 57. ՆՈՐ ՀԵՐԿԼՊԸ ՀԵՆ. ՁՈՒԹԻՒՆ:

Կերկայ դարուս սկզբում մին մանրաքնին մարդ առաջադրել էր նոր կանոն հարկապահանջութեան (խարաճ), որ նրա կարծեօքն արքունի եկամտից մեծ շահաւետութեան կարող էր բերել. նա մտադիր էր պահանջել

1, Ահս կհս դահեկան ամէն մին անկարգ գրած ոտանաւոր քանի մասին:

2, Երկու երկու դահեկան ամէն մին ընդդէմ քերականական կանոնաց գրած սխալմանց համար:

3, Երեք երեք դահեկան ամէն մին ուրիշ շարադրութեանից գողացած քանից մասին. և վերջապէս՝

4, Չորս չորս դահեկան ամէն մին սուտ ու կեղծած համբաւի մասին, որ օրագրութեանց մէջ դրվում է:

Եւ յա հաշուին հետեւելով այն նոր կարգադրութիւն յորինող մարդն աներկմիտ հաւատացած էր, որ ամէն տարի մինչև հարիւր միլիոն եկամուտ կարելի է աւելանայ: Բայց եթէ մեր ժամանակիս այսպիսի հարկապահանջութեան օրէնք լինէր, անպատճառ եկամտից ժողովքն հազարաւոր միլիոնից աւելի կարող էին լինել:

### 58. ՊԸՏԱՍԻՆՆԻ ԸՍՏ ԿԵՐԳԻ:

Ի ողորմիոս ժԵ արքայն մին օր տանից դուրս ելանելոյ ժամանակին յանկարծ հարցուց իւր դրան ծառայող մին իշխանից, թէ նա քանի՞ արու զառակ ունի:

Չորս, Չերդ Սեծութիւն՝ պատասխանեց նա: Յետոյ այն իսկ օրն Այսրն երկու և երեք անգամ պատահելուց

ևս հարցրուց նրան մի և նոյն բանն, և ամէն մին ան-  
 դամ առաջին պատասխանն ստացաւ: Սերժապէս յերե-  
 կոյեան պահան երբ թուղթ էր խաղում, Սուքոսիկոս  
 կրկին հարցրուց այն իսկ առարկայի մասին. բայց այս ան-  
 դամ պատասխանեց իշխանն, թէ որդիքս վեց են: Ինչպէս  
 հարցրուց զարմանալոյ ձեռք Կայսրն: Ես կարծեմ դու  
 յառաջ ստացեր, որ միայն չարսն ունիս: Աշխարիտ այդ-  
 պէս է, Չերգ Մեծուծիւն, բայց երկիւղ եմ կրում  
 ձանձրութիւն տալ ձեզ սղջ օրն մի և նոյն բանն կրկ-  
 նելով:

59. Ժ.Ը.ՈՒՆԳՈՒԹ.Ե.Ը.ՄԻ. ՍՏԱՅԵԼԿ,  
 ԳԼԿԼԱՍՈՒԹ.ԻՒՆԻՆ:

Մին պարսն՝ որ չափեցը դուրս շատախում ու-  
 շտակեր մարդ էր, մին օր հրձուանաց մէջ սաց իւր  
 սեզանակից ընկերացն, թէ իմ հայրս շատ ուտող էր,  
 մտրոս երկար ուտել կըսիրէր. ուրեմն այն երկու յատկաւ  
 թիւնքն պէտք է ժառանգութեամբ ինձ մնան:

60. ՅԱՆՉՆԵՂԱՍՏԱՆՈՒԹ.ԻՒՆԻՆ:

Մեհամարտ կռուի ( դուել ) հրախրլած թեթեամբոս  
 Ինչդիպցի փողոցումն ման դալոյ ժառանակին գտաւ մին  
 փորթիկ երեխայ ու շտապելով սաց նրան, դնա՛ սիրելի՛,  
 վաղելով մեր թաղի եկեղեցւոյ դուռն, և ասա՛ գանձապե-  
 տին հրամայէ ժամահարին, որ մեռելի զանգակ հարէ. և  
 ապա գան ու տանեն ննջեցելոյ մարմինն. Ինչ ևս իս-  
 սում, պարսն, դու կարծեմ կատարեալ առողջ ևս, բա-  
 նի միտքն չհասկանալով հարցրուց երեխայն, իմ համար  
 չէ՛ պատասխանեց յայտնի թեթեամբոսն, այլ այն պա-  
 րսնի համար է (մատամբ ցոյց տալով մօտիկ կանգնած  
 մարդոյն) որ մտադիր է այսօր իմ հետ մեհամարտութեան  
 դուրս գալոյ:

# ՅԼ. ՅԵՂՈՂ ԱԿ ԵՐՐԵ ՅՈՒԹԻՒՆ.

Հասարակաց առած է թէ վատութիւնն երբեմն բարի վերջաւորութեան է հասնում: Եւ յայտ է յետագայ դիպումսն: Եւ յողորմ քաղաքումն մին աղքատ բժիշկ կայր. որ երկար ամօք անգործ ման կրգայր փողոցներն և վերջն անձարութենից հարկադրված մտել էր զինեղաձառի մետ ծառայութեան: Պարսնի անհոգութեան շնորհօքն բժիշկ ծառայն շատ անգամ խմելքի ևս ծառայութեան հարկն կրտայր: Սին օր՝ երբ սա սովորաբար գլուխն լըցված զինեղան սրահումն քնած էր խռմելալով, անյայտ աղտիւրն (ղորտուաշ, քօծ) ներս մտաւ ու յետ զարթուցանելոյն սկսեց աղաչանօք խնդրել նրան, որ գնայ մին անյայտ դժուար հիւանդի մտիկ ու ձար տալոյ: Բժիշկի գլուխն թէպէտ թ բառականին լիքն էր, այլ այս դիպումսն յաջողութիւնն ստիպեց նրան համաձայնվել. ուստի և գնաց աղաչանոյ հետ: Հասին մին բարձրաշէն տան դրան, յետ արոյ վեր ելին վերնայարկն, ու բաղախինն ձեռքից բռնած բժիշկին տարաւ իւր աղջկապարտն ննջարանն: Բժիշկն դժուարութեամբ էր կանգնում ստից վերայ. իսկ երբ տեսաւ որ հիւանդն մեծազգի սնն է, ու մերձ ՚ի մահ ջառոյ մէջ է, օրրան ահալ լցվաւ, խմելքի զօրութիւնն ևս առաւել աւելցաւ մանաւանդ տան տաքութիւնից: Սերջայէս մեծ դժուարութեամբ ինչպէս և իցէ մօտացաւ նա հիւանդին, քայց երբ նրան շնչերակն (նաբղ) ունէր բռնած, յանկարծ վեր քնկաւ գետնի վերայ և ապա կամեցավ ներողութիւն խնդրել, սկսեց գոռալով առել, ինչ անեմ, ես մեղաւոր չեմ, արբեցութիւնն է պատճառ: Յետ սուրա դաւրա ելաւ շուտով ու գնաց: Սիւս օրն, երբ հիւանդն յուշե գալով, իմացել էր զիշերի անցքն և երբ բժիշկն յարբեցութիւնից արթնանալով մեծ ախրութեան մէջ գլուխն ձեռեկոյ վերայ էր այնպիսի յաջող դիպումսն զբնական մասին, յանկարծ տուն մտաւ ծանօթ աղախինն և յետ խոնարհութեամբ գլուխ վեր բերելոյն, տուաւ բլ-

ժշկին մին թղթոյ փակարանն որոյ մէջն գրած էր հինգ  
 հազար արծաթ ու ռուբլոյ գրամատան տոմսակ (բանկի թի-  
 լեթ) և գրած էր, որ ամէն կերպիւ հիւանդն պատրաստ  
 է օգնելոյ բժշկին մինչև իւր մահու օրն, միայն եթէ նա  
 գիշերի անցքն այլոց չյայտնէ: Այս խորհրդոյ հանգա-  
 մանքն այս էր. Հիւանդն... . . . կտանի կինն էր, որ իւր  
 ազգակցաց հետ անբաւականութիւն ունեցոյ պատճառաւ  
 ինքնասպանութեան դարձելի ախտն յաղթել էր նրան.  
 ուստի այն օրն խմել էր ափիսնի (Թիրեաքի) հետ խառն  
 ցքի (արաղ), այլ նրանից նա միայն արբել էր, ինչ  
 բով խառնած ափիսնի մասն շատ քիչ է եղել: Այս-  
 պէս բժշկի գոտին երկու միտք է ունեցել, և հիւանդ  
 կինն կարծեւով թէ բժիշկին իմացել է նրան մտադրութեան  
 և յուշադրութեան պատճառն, ՚ի հարկ է ամէն շափու  
 եղանակն պէտք էր ՚ի գործ դնէր ծածուկ խորհուրդն  
 յայտնի չլինելոյն համար:

## 62. ԱՆԿԱՐՆԵՆՈՒԹԻՒՆ

Գաղղիոյ Ա... . զօրապետի կինն փարիզու բա-  
 լոր կանանց մէջ երեւելի գեղեցիկն էր. բայց դժբաղդա-  
 բար իւր ամուսնոյ սերիցն զրկուած էր այն պատճառաւ,  
 որ նա վեց տղիկ էր ծնել, և արու զաւակ չունէր: Այս  
 ատելութիւնս երբ չափիցն գուրս ելաւ, մարդն հարկա-  
 դրանօք յառաջադրեց նրան արձակումն: Այս յօժարու-  
 թեամբ պատրաստ եմ՝ ասաց կինն, միայն եթէ դարձ-  
 նես ինձ ինչ որ ես իմ հետ բերել եմ՝ քո վերայ պսակ-  
 վելոյս ժաւանակին: Այս նմանապէս մեծ ուրախութեամբ  
 պատրաստ եմ՝ պատասխանեց մարդն, բոլոր բաժինը և  
 միւս այլ ինչ որ քեզ պատկան բան ունիս մինչև վեր-  
 ջին թե՛ն դարձնել քեզ: ՚Իս չ'է՛՝ ասաց կինն, սխալ-  
 ված ես, իմ պահանջելքն իմ անցեալ նորահաս տա-  
 ըլեքն, գեղեցիկութիւն ու զգայութեանց զուարթութիւնն  
 են. դարձրու ինձ իմ կոլուսան, ես այսօր իսկ պատ-

բնութիւն անառ և բեզբառ ուղած հանգստութիւնն: Այս  
որովիտ պատասխանիս շարժեց մարդոյն խղճմանքն և  
պատճառ դարձաւ նրանց մէջ երկար վիճմանց վերջաւոր  
ութեանն:

### 63. ԱՌԱՏԱԶՆՈՒՆՈՒԹԻՒՆ:

Շատ ժամանակ չէ, որ Ամերիկայի օրագրաց  
(կողէթը) մէջ տպված էր այս յետագայ յայտարարու-  
թիւնս, թէ մին ին բաւականին պատուելի ու հասարակաց  
սիրական անձնցանկանում է գտնել ինչ տեղ և իցէ  
հազար Փրանկ (Փրանկն 25 կողէկ արծաթ է): և թէ  
այս գումարս նա համաձայն է համահասար բաժանել  
նրան հետ, ո՞վ որ կարողանայ ցոյց տալոյ ուղած փողոյ  
տեղն:

### 64. ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ:

Սարուք և մօօք թեթև մին այրի կին խօսակցութեան  
ժամանակին երևելի արբեցողի հետ առայ նրան, թէ  
չեն զարմնում, որ յետմարդոյս վախճանելոյն ահա՛ վեց  
տարի է անցնում, բայց մինչև այսօր ոչ մին անգամ  
միաքս չեմ բերած կրկին մարդոյ գնալոյ: Աս նմանապէս  
պատասխանեց արբեցողն, այն ժամանակից, երբ ես ինձ  
ձանաչել եմ, բնա ին ծարաւած չեմ:

### 65. ԱՉԳԻՆՑՈՒԹԻՒՆ ԳԻՆՈՅ:

Մուհատին խալիֆայն շատ սիրող էր որսորդու-  
թեան: Սա մին անգամ սախրական ձանապարհիցն մա-  
լորված՝ գուրս ելաւ անձանօթ գեղի մէջ, մտաւ մին  
փոքրիկ առն և յետ բարեհաճութեամբ ընդունվելոյն,  
սանառակից գինի պահանջեց: Շուտով մէջ տեղ գինուով  
լիքն կուժ բերին: Խալիֆայն մին բաժակ (թաս) լսակց  
ու հարցրուց սանառակից, ձանաչում մէ նա ո՞վ է իւր հիւրն

( զօհաղ ) : Երևականն պատասխանեց՝ ոչ : Կո՛ ստաց, խալիֆայի երեւի զօրապեան եմ : Եւս կերպիւ ամէն մէն նոր բաժակ զինի խմելոց, սկսեց նոր հարցումն անել և նոր նոր մեծամեծ մարդկանց անուանին իրան վերայ դնելով՝ ծածկելով միայն իւր յատուկ անունն : Բայց երբ որ վերջին անգամն նոյն կերպիւ խմաց զինին ու ստաց ասանակ բոջ, թէ ճշմարտոն խմացիր, ես ինքս իսկ խալիֆայն եմ, որոյ իշխանութեան ներքոյ է բոլոր աշխարհն, սպրմել շինականն յանկարծ տեղեցն վերթուս և ապա ձեռքն կուժին ձգեց, վեր առաւ ու թողցրուց : Օւրմացած խալիֆայն հարցրուց, թէ ի՞նչ է պատճառն : Սեանք թե ստաց, դու՛ կարծեմ, եթէ վերք ինչ աւելի խմես, անպատճառ ինքդ Սահմա Սարգարէին տեղն կը համարես, իսկ երբ կուժն գարտախես, սվ գիտէ, միւս ինչ բարձրագոյն աստիճանի պիտի հասցնես քեզ : Եւ լաւն այն է, որ ընկերս ու հանգստանաս :

66. ՅԱՒԵԿՅՈՒԹԻՒՆ :

Մին այդեղործութիւն սիրող պարոն երբեմն ծառոց տելրդ ճիւղքն յտակելոյ ժամանակին յանկարծ ձեռաց ունեցած մեծ դանակովն հարաւ իւր ռան վերաւորեց : Երա այդեպանն այս անցքս իմանալ բանին մօտացաւ ու տեսնելով՝ որ ոտիցն արխն է գալիս՝ անակոծ ցաւակցութեամբ սկսեց անաւ վաճի զոչելով ասել՝ ի՞նչ արեիր դու պարոն, ախոս, գեղեցիկ կօշիկդ սնչացրիր :

67. ՀԱՕՈՒՆԳԻՒՏ ԴԻՊՈՒՆՕ :

Տիւրաբի իշխանի կինն մին օր զանազան դիպուածոց վերայ խօսակցութեան մէջ պատմեց մին անուանի կենդանագիր պատկերահանի, թէ երկու տարի յառաջ տան աւազանի մէջ լողանալոյ ժամանակին յանկարծ ամպն գողաց և սաստիկ կայծական ահից այնչափ միտքն թռաւ :

դ լինիցն, որ մերկանդամ աւազանից դուրս եկաւ ու փա-  
 խաւ տանից դէպ 'ի դուռն: Պատկերահանն ոչինչ քան  
 չ'իտելով բարձրացաւ տեղիցն ու մտանալով լուսամու-  
 տին՝ սկսեց մտադրութեամբ նայել դէպ 'ի երկինքն: Ի՞նչ  
 քանի ես, հարցրուց Տիբարայի կինն: Ուրիշ խորհուրդ  
 չ'ունիմ, պատասխանեց պատկերահանն՝ ես միայն մտիկ  
 եմ տալիս երկինքին, տեսնեմ կայծական նշան կայ թէ  
 ոչ. եթէ քս պատմած դիպուածոյն կրկին պատահման  
 յոյս լինի, ես մտադիր եմ սրբաբութեամբ մնալ քո մօտ,  
 ի սրում պատկերահանի համար այնպիսի դիպուածքն յա-  
 տուկ հաջուագիւտ պարզե են բնութեան:

68. ԱՇԽԱՏԱՆԻ ՕՍՈՒԹԻՒՆ:

Ի ուղղակիս ժե՛ կայսրն երբեմն թուղթ խաղալոյ  
 ժամանակին իւր իշխանաց հետ խաղի մտին երկբայու-  
 թիւն ծագեց, ուստի և սկսեց երկար միճարանութիւն  
 անել: Ըստ միջոցիս յանկարծ տուն մտաւ կոմս Վրա-  
 մօնն, խաղացողքն լուռ էին նստած, չ'համարձակելով  
 կայսեր ընդդէմ պատասխան տալոյ: Յետոյ դառնալով  
 դէպ 'ի կոմսն՝ կայսրն ասաց, զարմանալի՛ է, որ այս  
 պարսնայքս չ'են հասկանում ստածս: Չերգ մեծութիւն,  
 պատասխանեց Վրամօնն՝ Վուք իրաւ չ'էք: Ի՞նչ ես  
 խօսում, կրկնեց կայսրն, թող խօսքս մերջաւորութեան  
 հասցնեմ, ապա դատիր, ո՞վ է մեղաւորն: Հարկաւոր չ'է՛  
 ասաց կոմսն, մի՞ թէ ձեր մեծութիւնն կարծու մէ, որ  
 եթէ փզբ ինչ հնար լինէր ձեզ պահպանել՝ ճշմար-  
 տութիւնն ձեր կողմն լինելոյ պատճառաւ, ապա պատ-  
 ուելի խաղացողքն այսպէս լուռ կ'լինէին և չէի՞ն շտապել  
 արդարացնելոյ ձեր խօսքն: Ճշմարտութեան զօրութիւնն  
 մեծ պէտք է համարվի քան թէ թաղաւորութեանն:

69. ՆԵՒՆԻ ԿԱՐՆՈՒԹՅՈՒՆ

Մարիամ Տերեղեա թագուհին մին օր հարցրուց  
մին նորածնի թե իշխանի, թէ համաձայն է նա հասարակաց  
կարծեաց հետ, որ Ղ. և . . . թագաւորի դուստրն աշխարհիս  
եղեոնն շատ գովելի կինն է :

Չերդ մի ծովուն, պատախանեց իշխանն, երեկ ճշմաւոր  
էր է, ես ևս այդպէս էի կարծում :

70. ՊԱՐԿԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Մին նորահաս և շատ ունեւիլ մարդ պատահեց  
գրանդանաղիաց հասարակ թեան զանազան գիտութեանց  
վերայ վեճարանելոյ ժամանակին, բայց որակեօնե ողջ երեկունն լուսնատաճ էր անաց խառնվելոյ նրանց խօսակցութեան մէջ. ուստի յետոյ ընկերն հարցրուց նրան, թէ ինչո՞ւ նա այնպիսի նշանաւ որ անձանց մօտ ցոյց չ'ըտուտ իւր ոտտ մեծահասութիւնն : Պատասխանեց նա, թէ ես երկիւղ էի կրում, որ և ես նմանապէս չ'ըստիմ այնպիսի բան, որոյ միտքն ինքս լուսն չ'եմ հասկանում :

71. ՆԵՒՆՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Պատեման ժամանակին եկեղեցոյ մն մին նորահաս  
այճիկ շատ խոր մտածողութեան մէջ էր : ուստի երբ հարց  
ցրելն՝ ի՞նչ է պատճառն, պատասխանեց՝ մասճումնդքս  
այն մասին է : որ եթէ մարդս վախճանելոյ լինի, ուր  
կարող եմ ես կրկին մարդոյ գնալ :

72. ԵՆՍՈՒՈՐ ԵՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

Երբայցոյց մէջ՝ յայտնի է, շատ է պատմուհում,  
որ ամուսնա թիւն մանուշ մարդիկ աւանց աղջկն

երես առ երեսն ճանաչելոյ նշանիս մ' են, միմիայն նկարա-  
գրած պատկերն անտեղով հետանց, որ 'ի հարկ է  
պատճառ է լինում մեծ սխալմանց: Մ'ին Միգղիացի այս  
սովորութեանս հեռեկեղով նմանապէս նշանոված էր մին  
աղջկան հետ. բայց երբ երես առ երես անտառ նրան,  
լաւ հասկացաւ, որ հմուտ պատկերահանն իւր դրէ բարձր  
ջոնքն գործ է անել ընտ թեան անգթութիւնն ուղե-  
լոյ: Հարսանեաց ժամանակն մտապէլ էր. այլ պոլմեղի  
աղայն չգիտէր ի՞նչպէս հարկագրէ իրան համաձայնիլ  
դնալ պատկիւնոյ: Ա' երջապէս առաւ իւր մտն եղած աղ-  
ջկան պատկերն, գրաւ թղթոյ մէջ ու յղէց նրա ծնողայն՝  
գէշեւով, թէ ես այս վայրկեանիս պատրաստ եմ ամուսնա-  
նալ, միայն ոչ կենդանի օրինակի, այլ նկարագրած  
պատկերի հետ:

### 73. ՏՊԵՐԸՆ ԹՕՐԸՅ:

Նապօլէան կայսրն մին անգամ Փարիզից պատե-  
րագօրէ դնալով ժամանակին հրամայեց զօրապետաց, որ իրանց  
հեան տպարան ունենան և քանի մի գրաշար մարդիկ: Մ'իս  
նորահաս աղջիկ այս բանս ընելով՝ ասաց, թէ տպարանն  
և գրաշարքն երկի հարկսոր են սպանոված զօրականաց  
թաղման հրա իրական թուղթքն տպելոյ համար:

### 74. ՊԼՐԳՆԻՒ:

Մտղովիկոս ժգ կայսրն մին օր Կան Վրանկոնին  
ասաց, թէ ճշմարտութիւն ու բանալն շատ վաւճար կեղա  
է, դու ևս մի՞ ծածկիր, որ քս հասակն սթառնից անց է:  
Կանն ծնկան վերայ իջաւ ու համբարեկով կայսեր ձեռն  
ասաց՝ ձերգ մեծութիւն քանի՞ սղորմած էք ծառայիդ վե-  
րայ, որ երբեմն այդպէս մտաբերում էք նրա տարիքն:  
Կայսեր ասութեան յատուկ մտքն այն էր, թէ կանն  
ճերութեան հասած լինելով՝ կարող է թալալ արբունի

Տառայու թիւնն այլ երբ միւս գլխաւոր ատիժ սմաւորքն չ'հասկանալով կայսեր աստ-թեան միտքն՝ սկսեցին շնորհաւորել, Պրամիճոն ծածկելով խորհրդոյ յայանու թիւնն, պատասխանեց, թէ շատ շնորհակալ եմ՝ ձեզնից պարսնայք, կայսրն ճշմարիտ է պարզեւեց ինձ. . . . երկու աւելի ասքի:

76. ԱՆԱՄԵՆԻ Ի ԿՆՏԱՐԱՆԻ ՈՒԹԻՒՆՆ

Փրկորիկոսի մեծին մին օր Մ. . . իշխանապետի կիճն ասաց, թէ ձեր փառք ու զովեսան բայր աշխարհի յայանի են, ինչու նոր կաշխատք աւելի մեծաշքութիւն գտնել: Ամենքեան գիտեն, որ դու ևս շատ գեղեցկաւ գէմ ես, պատասխանեց արքայն. բայց չ'նայելով բնութեան առաւ շնորհացն, դու երեսդ և գեղով ես զարգարում:

76. ՀԱՒԵՏԱՐԻՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆ

Ռամոնոս երեւիլ բանաստեղծն երբեմն հարցուց Միգղեացի Ալլիսնոս մատենագրին, թէ հաւատարիմ է թարգմանելո՞ւմ նրա շարագրութիւնն Միգղեացոց լեզուաւ: Այնքան հաւատարիմ է թարգմանութիւնն, պատասխանեց Ալլիսնոս, որ ուր բնագրումն չ'է հասկանալի, այնպէս և թարգմանութեան միտքն իմանալու հետք չիայ:

77. ԾԱՆՈՒԿԵՒԼ ՀԵՏԱՅԻՔԻ ՈՒԹԻՒՆՆ

Մին կին յարգական ձեւով զոյց բանալով ճմանն յայանի տասմեականի հետ և կամելով հաճեւել թուել նրան՝ խօսքի մէջ սկսեց շնորհակալութիւն անել, որ նաքեր յօրինած Անգղացոց լեզուի Ռապրումն երբէք անպարկեշտ բառ չ'ի խառնել: Ուրեմն գուք հետաքրքրու

Թեամբ որոնե՞լ էք ձեր սօսած բառքն՝ պատասխանեց  
գիտնականն կծուական ձևով :

### 78. ԵՐԵՏ ՈՉ ԸՍՏ ԳՈՐԾՈՅ՝

Բարոյական շարագրութեամբք յայտնի անձն, որ  
իւր գրածին և խօսած խրատոցն բնաւին կատարումն չ'էք  
տալի և որ աննեղելին էր, իւր կնոջ հետ բարբարոսական  
վարմունք ունէր, մին օր մեծ բազմութեան մէջ սովորա-  
բար իւր սիրելի առարկայից վերայ խօսելով՝ վեղջն ամուս-  
նութեան քաղցրիկ կեանքն, մալգոյ ու կնոջ փոխադարձ  
սէրն և համաձայնութիւնն սկսեց գովել, ասելով՝ սով-  
որք իւր կնոջ հետ վառ է վարվում, այնպիսին ալ ժէ, որ  
նրա տունն այլ վե իրա հետ 'ի միասին: Բազմութեան  
մէջից մին անյայտ անձն իսկոյն հարցրուց, թէ՞ պարսն խրա-  
տիչ, դուք ևս ձեր տան մասին ունի՞ք ապահովագիր:

### 79. ԵՆՆՈՎ ՈՐ ՓԵՓԵՂ:

Կանր հիւանդութեան մէջ երբեմն մին Լնդդիացի  
շատ աղաչանք ինդրեց իւր խօստովանահօրից յետ մահաւն  
կարգադրութիւն անել, որ նրա փորն պատռեն ու լաւ  
մահաբրութեամբ մահի տան: Ի՞նչ է ինդրոյգ պատճառն՝  
հարցրուց խօստովանահայրն. Պատասխանեց հիւանդն, թէ  
բժիշկքն միմեանց հետ անհամաձայն կարծիք ունին իմ  
ցաւոյ յատկութեան մասին: Եւստի և ևս կամենում եմ  
ինմանալ, թէ սով է նրանց մէջ ճշմարիտ և աւել բանա-  
գէտն:

### 80. ՕՊՈՒՏ ԼՈՒՈՒԹԵԱՆ:

Շատ մարգիկ խելօք են համարվում այն պա-  
ճառաւ, որ քիչ են խօսում: Սի կին այսպիսի բնու-  
թիւնն ունեցող անյայտ պարսնի մասին ասաց, թէ նա ճըշ-  
մարիտ այնքան խելք ունի, որքան հարկաւոր է, որ ու-

բիշ որ չ'կարողանայ խմանալ նրա յի՛նար լինեցն :

### 81. ԵՐԱՉԱՀԱՆՈՒԹԻՒՒՆ :

Կարո՞ւս ե՞ կայսրն երբեմն սրտորդութեան ժա-  
մանակին ճանապարհիցն մոյրտիւմ ծմակի մէջ դառա մին  
փոքրիկ տուն, որոյ բնակիչքն աւազակութիւն կանէին :  
Սրանք Թագաւորին տեսած պահուն բռնեցին ու տարան  
կրանց մօտ. միայն չճանաչելով նրան, և յետոյ սխեցին  
ասել՝ մին ընկերն, լծէ ևս երազ եմ տեսել, որ քո վեր-  
արկուդ իմ վերայ շատ յարմար կը գայ, ասաց ու աւա-  
հագաւ : Միւսն՝ Թէ ես ևս երազումս տեսել եմ՝ քո գը-  
դակն իմ գլխի վրայ, ապա և սա գրակն ու  
դրաւ գլխին : Երրորդն հաւանելով կօշկին և պատ-  
մելով նամանապէս իւր տեսած երազն շուտով հանեց  
ու հագաւ ոտքին : Իսկ չորրորդն ձեռն ձգեց կայսեր վը-  
զից րակի շղթայիւ կախած վշեւոյ սրտորդական փողն հա-  
նել . բայց կայսրն ասաց այս վերջնոյս, համբերէր,  
Թող յառաջ ցոյց տամ փշեւոյ կերպն և ապա հանէր :  
Իսկ երբ փողն փչեց, քիչ ժամանակ անցա, Կայսեր  
քսանից աւել ծառայքն, որ վաղուց ման էին դալիս  
ծմակումն, եկան ու յետ տուն մանեւոյն զարմացան, տես-  
նելով Թագաւորի համարեան մերկանգամ լիւեցն : Մի  
վախենաք՝ ասաց կայսրն, աւազակաց, Հիմիկ հերթն իմն  
է պատմել ձեզ իմ անցեալ գիշեր տեսած երազս : Յետ  
որոյ հրամայեց կայսրն և ծառայքն առանց յետաձգու-  
թեան կատարեցին նրան երազն, աւազակաց վըզիցն ծա-  
ռից վերայ կախ աւազով :

### 82. ԵՐԱՆ :

Արքունի դրան մին գլխուսը աստիճանուսը շատ  
